

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 39/2

12 օգոստոսի 2013 թ.

Քննարկվեց քաղաքացի Հրաչիկ Խաչատրյանի 19.07.2013 թ-ի դիմումով բերված բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ 17.07.2013 թ-ի թիվ 1411315 վարչական ակտի դեմ:

Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ 17.07.2013 թ-ի թիվ 1411315 վարչական ակտով (այսուհետ նաև վարչական ակտ) մասնավորապես արձանագրվել է.

2013 թ-ի հուլիսի 13-ին ժամը 16:30-ի սահմաններում Արարատի մարզի գ.Նոր Խարբերդ 1 փ., 48 հասցեում բնակվող ֆիզիկական անձ Հրաչիկ Խաչատրյանը զբաղվել է էլեկտրական սարքերի ապօրինի վերանորոգման աշխատանքներով: Ֆիզիկական անձ Հրաչիկ Խաչատրյանը համաձայն իր բանավոր հայտարարության զբաղվել է ապօրինի գործունեությամբ շուրջ քսան օր, որի ընթացքում ստացել է 15000 դրամ համախառն եկամուտ:

Ֆիզիկական անձ Հրաչիկ Խաչատրյանի հարկային պարտավորությունները հաշվարկելու համար կիրառվել է <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.09.98թ. թիվ 580 որոշման դրույթները, իսկ տուգանքը հաշվարկվել է համաձայն <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ գումարով 200.000 դրամ:

Քաղաքացի Հրաչիկ Խաչատրյանի բողոքում մասնավորապես նշված է.

17.07.2013 թ-ի թիվ 1411315 վարչական ակտով արձանագրվածը, որ 2013 թ-ի հուլիսի 13-ին ժամը 16:30-ի սահմաններում Արարատի մարզի գ.Նոր Խարբերդ 1 փ., 48 հասցեքում զբաղվել եմ էլեկտրական սարքերի ապօրինի վերանորոգման աշխատանքներով, չի համապատասխանում իրականությանը: Ըստ Հրաչիկ Խաչատրյանի դիմում-բողոքի, նա ապօրինի գործունեությամբ զբաղվելու հայտարարություն չի արել:

Ելնելով վերոգրյալից Հրաչիկ Խաչատրյանը խնդրում է վերանայել 17.07.2013 թ-ի թիվ 1411315 վարչական ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով քաղաքացի Հրաչիկ Խաչատրյանի և ՕՀՎ 26-րդ բաժնի պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառարանությամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում>:

Քննարկվող դեպքում քաղաքացի Հրաչիկ Խաչատրյանի նկատմամբ կազմված վարչական ակտով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ, հետևապես առկա

է վերջինիս համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության փաստը: Այսինքն, վարչական ակտով արձանագրված խախտման ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26-րդ բաժնի համապատասխան պաշտոնատար անձանց:

Սույն բողոքի քննարկման ընթացքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ տվյալ դեպքում վարչական ակտով լրացուցիչ պարտավորությունն առաջադրվել է վերոգրյալ օրենսդրական նորմի, այն է՝ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26-րդ բաժնի պաշտոնատար անձանց առաջարկվեց Հանձնաժողովին ներկայացնել այն ապացույցները, որոնք և հիմք են հանդիսացել վարչական ակտով նկարագրված խախտումն արձանագրելու համար, սակայն որևէ հիմնավոր ապացույց, ըստ էության, չներկայացվեց:

Հարկ է նշել, որ վարչական ակտի համաձայն քաղաքացի Հրաչիկ Խաչատրյանի կողմից շուրջ քսան օր ապօրինի գործունեությամբ զբաղվելու և 15.000 դրամի եկամուտ ստանալու եզրակացության համար հիմք է հանդիսացել վերջինիս բանավոր հայտարարությունը, այն դեպքում, երբ քաղաքացի Հրաչիկ Խաչատրյանը ժխտում է ապօրինի գործունեությամբ, այն է՝ էլեկտրական սարքերի վերանորոգման աշխատանքներով զբաղվելու հանգամանքը:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում կիրառելի է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի համաձայն. <Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել>:

Իր հերթին, համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի <ա> կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ 17.07.2013 թ-ի թիվ 1411315 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահի Ժ/Կ



Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ